# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

Փետրվարի 15-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին տոնում է Ս. Սարգիս զորավարի, նրա որդի Մարտիրոսի և տասնչորս զինվորների հիշատակության տոնը:

Արդեն մի քանի տարի է, ինչ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Ս. Սարգսի տոնը հռչակվել է նաև որպես երիտասարդների օրհնության օր: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր մաղթանքն է հղել բոլոր երիտասարդներին:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի երիտասարդ հայորդիներ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմորեն ողջունում ենք ձեզ և բերում Հայրապետական Մեր օրհնությունը Սուրբ Սարգսի տոնի առիթով, որն արդեն մի քանի տարի տոնախմբում ենք նաև որպես Երիտասարդների օրհնության օր:

4-րդ դարից ի վեր մեր ժողովուրդն առանձնակի զգացումով է նշում Սուրբ Սարգսի, նրա որդու՝ Մարտիրոսի ու նրանց հետ նահատակվածների հիշատակի օրը՝ մասնավորաբար ճանաչելով Սուրբ Սարգսին իբրև Աստծո առջև մեծ բարեխոս, երիտասարդների արագահաս օգնական, բարի իղձերի կատարող և սիրո հովանավոր:

Դարեր շարունակ մեր ժողովուրդը բանաստեղծություն, երգ ու ավանդություններ է հյուսել Սուրբ Սարգսին նվիրված՝ փառաբանելով սպիտակաձի, սրաթռիչ սրբի «հարեհաս» զորակցությունը սիրող սրտերին, որ շուտով կրեն թագը սուրբ պսակի և արժանանան օրհնությանն Աստծո: Հանձին Սրբի մեր ժողովուրդը գովերգել է հավատավոր հոգու անձնազոհությունը, արդարամտությունը, քաջությունն ու հավատարմությունը և այս արժեքներով կրթել է իր երիտասարդ զավակներին: Այսօր դուք եք ժառանգները մեծագործ այդ արժեքների, որոնք կօգնեն ձեզ ազնվորեն սիրելու և սիրվելու, հավատարմորեն նվիրվելու և ծառայելու ձեր ծնողաց ու մերձավորների երջանկությանը, հարազատ երկրի ու ժողովրդի բարօրությանը ու միշտ հոգով երիտասարդ մնալու:

Ահավասիկ, երբ վերստին տոնախմբում ենք հիշատակը «լսող աղօթից» և «կատարիչ խնդրուածաց» Սուրբ Սարգսի և նրան պսակակիցների, շտապեք մեր սուրբ եկեղեցիներ և ձեր սրտի բարի իղձերը մատուցեք Տիրոջ ընտրյալ ծառային, քանզի սրբոց պսակից Բարեբար Աստված միշտ ունկնդիր է իր խնդրակատար վկայի բարեխոսությանը:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջև Հայրապետիս աղոթքն է, որ Տերն Իր հանապազ օրհնության ներքո պահպանի ձեզ, սիրո ճանապարհներով առաջնորդի ձեր քայլերը և արագահաս բարեխոսությամբ Սուրբ Սարգսի ու նրա զավակի՝ Սուրբ Մարտիրոսի, ի բարին կատարի ձեր ազնիվ մտածումներն ու իղձերը:

Թող Տերը միշտ հավատավոր, սիրավառ և ուրախ, պայծառամիտ ու քաջակորով պահպանի ձեզ՝ աղոթախոս և սիրով առլեցուն անցնելու ձեր կյանքի ուղին:

*«Սէր ոչ երբեք անկանի,... զհետ երթայք սիրոյ, եւ նախանձաւոր լերուք հոգեւորացն առաւել» (Ա Կորնթ. ԺԳ 8, ԺԴ 1):*

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ